Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունիսի 11-ի N 838 - Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ
ՀՐԴԵՀՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները կարգավորում են Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրված հրդեհների, դրանց պատճառով հասցված նյութական վնասների, հրդեհների ժամանակ զոհված և վիրավորված անձանց պետական միասնական հաշվառման (այսուհետ՝ հաշվառում) հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվառումն իրականացվում է հրդեհների առաջացման պատճառների, հասցված վնասների, ինչպես նաև հրդեհների կանխարգելման միջոցառումների մշակման նպատակով:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն հավելվածում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1) հրդեհի հետևանքներ՝ մարդկային զոհեր, մարդկանց պատճառված առողջական և մարմնական վնասվածքներ, թունավորումներ, կենդանիների, թռչունների անկում, շենքերի, շինությունների, սարքավորումների, փաստաթղթերի, պատմական և մշակութային արժեք ներկայացնող առարկաների, կենցաղային և այլ գույքի ոչնչացում ու վնասում, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցված վնասներ.

2) հրդեհից զոհեր՝ մարդիկ, ովքեր զոհվել են անմիջապես հրդեհի վայրում ստացած այրվածքներից, ծխից ստացած թունավորումներից և հրդեհի այլ գործոններից կամ հրդեհի վայրում վնասվածք ստանալուց հետո բժշկական կազմակերպություններում հիվանդանոցային պայմաններում բուժման ընթացքում՝

դեպքը տեղի ունենալու օրվանից 30 օրվա ընթացքում, որը հաստատվում է իրավասու բժշկական կազմակերպությունների եզրակացությամբ.

3) հրդեհից վնասվածքներ ստացած անձինք՝ մարդիկ, ովքեր հրդեհի հետևանքով ստացել են այրվածքներ կամ մարմնական այլ վնասվածքներ, ծխից թունավորումներ կամ մարմնական այլ վնասվածքներ և ստացել բժշկական միջամտություն.

4) ոչնչացված նյութական արժեքներ՝ նյութական արժեքներ, որոնք ամբողջությամբ կորցրել են իրենց որակը և արժեքը, չեն կարող օգտագործվել ըստ նշանակության և վերանորոգման արդյունքում պիտանի չեն հետագա օգտագործման համար.

5) վնասված նյութական արժեքներ՝ նյութական արժեքներ, որոնք վերանորոգման միջոցով կարող են դառնալ պիտանի՝ հետագա օգտագործման համար:

3. ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

4. Հաշվառումն իրականացնում է Փրկարար ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն), այդ թվում՝ իրավասու մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա:

5. Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը նախորդ ամսվա ընթացքում գրանցված հրդեհների վերաբերյալ տեղեկատվությունները իրավասու մարմինները ներկայացնում են ծառայություն՝ համաձայն N 1 ձևի: Նախաքննություն իրականացնող մարմնի կողմից հրդեհների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է 2 փուլով՝ պայմանավորված տվյալ պահին վարույթում գտնվող դեպքերով և ավարտված վարույթի դեպքերով:

6. Ծառայությունը յուրաքանչյուր ամիս ամփոփում է հրդեհների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրամադրված տեղեկությունները՝ տվյալների ճշգրտման նպատակով դրանք համեմատելով նախաքննություն իրականացնող մարմիններից (հրդեհի փաստը և դրա առաջացման պատճառները արձանագրելու նպատակով), բժշկական կազմակերպություններից (հրդեհից զոհերի կամ հրդեհից

վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ) և ապահովագրական ընկերություն-ներից (հրդեհներից հասցված վնասի չափի վերաբերյալ) ստացված տեղե-կատվության հետ: Տվյալների միջև անհամապատասխանության դեպքում, լրացուցիչ ճշգրտումներ իրականացնելու նպատակով, ծառայությունը գրավոր հարցումներ է ուղարկում տեղեկատվություն տրամադրող մարմիններին (կազմակերպություններին):

7. Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառման ենթակա են այն հրդեհները, որոնց հետևանքների վերացման ուղղությամբ ներգրավվել են ծառայության հրշեջ-փրկարարական ստորաբաժանումները, պետական կառավար-ման համակարգի մարմինները, կազմակերպությունները, որոնք ունեն հրդեհաշիջման գործողություններ իրականացնելու իրավունք, ինչպես նաև հրդեհների այն դեպքերը, որոնց մարմանը չեն մասնակցել հրշեջ ստորաբաժանումները, և որի մասին հայտարարությունը ստացվել է քաղաքացիներից, իրավապահ մարմիններից կամ ապահովագրական ընկերություններից:

8. Հրդեհի փաստը հավաստող փաստաթուղթը հրդեհի հաշվառման քարտն է (համաձայն N 2 ձևի), որը կազմվում է ծառայության կողմից՝ հրդեհի վերաբերյալ ստացված տեղեկությունների հիման վրա՝ դրանք ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

9. Հրդեհից զոհերի և հրդեհից վնասվածքներ ստացած անձանց հաշվա-ռումն իրականացվում է բժշկական կազմակերպություններից ստացված տեղեկու-թյունների հիման վրա:

4. ՀՐԴԵՀԻՑ ՎՆԱՍՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

10. Հրդեհից հասցված նյութական արժեքների վնասը հաշվառվում է՝ անկախ դրա փոխհատուցման ենթակա լինելու հանգամանքից: Հրդեհից հասցված նյութական վնասը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

11. Հրդեհից պատճառված նյութական վնասը հաշվառվում է իրավաբանական անձանց կողմից տրված տեղեկանքների, դատարանների որոշումներից քաղվածքների, ապահովագրական ընկերությունների կամ գույքի սեփականատերերի գրավոր հայտարարությունների հիման վրա՝ կցելով պաշտոնական փաստաթղթեր, որոնք հաստատում են հրդեհից հասցված գույքային վնասի չափը: Նշված տվյալների հավաստիության համար պատասխանատվություն են կրում համապատասխան փաստաթուղթը տրամադրող անձինք:

Ձև N 1

Հրդեհների վերաբերյալ Փրկարար ծառայությանը ներկայացվող տեղեկություններ

NN ը/կ	Մարզ	Համայնք/բնակավայր/ վարչական շրջան	Հասցե	Դեպքի, պատահարի				Հասցված վնասներ																	
				Օրը, ամիսը, տարին	Ժամը	Բնույթը	Պատ-ճառը	Զոհ	Վիրա-վոր	Կենդանիներ		Ամբողջությամբ վնասված						Մասնակի վնասված						Նյութական վնասի չափ/ ՀՀ դրամ (առկայության դեպքում)
										Սնված	Վնասված	Շինություն	Տրանսպորտային միջոց	Գյուղատնտեսական նշանակության տարածքներ	Բուսածածկ տարածքներ	Պահեստավորված ապրանքներ	Այլ օբյեկտներ և տարածքներ	Շինություն	Տրանսպորտային միջոց	Գյուղատնտեսական նշանակության տարածքներ	Բուսածածկ տարածքներ	Պահեստավորված ապրանքներ	Այլ օբյեկտներ և տարածքներ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
1																								
2																								
3																								
4																								
5																								
6																								
7																								
8																								
9																								
10																								

Ծանոթություն

1-7, 9 և 10 սյունակները լրացնում են առողջապահական ոլորտի լիազոր մարմինները:

1- 23 սյունակները լրացնում են նախաքննության մարմինները:

1-7 և 11-23 սյունակները լրացնում են ապահովագրական ընկերությունները:
ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ն լրացնում են բոլոր սյունակները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս իրականացնում են հրդեհների հաշվառման գործառույթ:

Ձև N 2

ՀՐԴԵՀԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ

1.	Հրդեհի առաջացման օրը, ամիսը, տարին և ժամը	
2.	Հրդեհի առաջացման հասցեն	
3.	Հրդեհի պատկանելությունը	
4.	Հրդեհի առաջացման վայրը	
5.	Հրդեհի մեկուսացման օրը, ամիսը, տարին և ժամը	
6.	Հրդեհի մարման օրը, ամիսը, տարին և ժամը	
7.	Հրդեհի հետևանքով այրվել է	
8.	Հրդեհի ընդհանուր մակերեսը	
9.	Հրդեհի հետևանքով զոհվել է	
10.	Հրդեհի հետևանքով վնասվածքներ է ստացել	
11.	Հրդեհի ընթացքում անկել է (գլուխ կենդանի/հատ)	
12.	Հրդեհի ընթացքում վնասվել է (գլուխ կենդանի/հատ)	

Ստորաբաժանման ղեկավար՝ ——————————/——————————/——————————**թ.**

(անունը, ազգանունը) **(ստորագրությունը)** **(օրը, ամիսը, տարին)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ